




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

621.396

Ց-13



ՑԱԾԻ ԶԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻԼԱՄՊԱՆԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՑԻՉ

18 SEP 2013

11892

21.396

04 AUG 2010

3-13

պ

35606


Բարձր խոսող ընդունիչ ունենալու համար
գործ են ածում ցածր հաճախակաճության ու-
ժեղացուցիչներ: Յեթե բարձր խոսող ընդունիչը
պետք է ղրվի մի փոքր սենյակում, դետեկտոր-
ային ընդունիչի, կամ լամպավոր ընդունիչի
կողքին, դեռևս են ցածր հաճախականության
միջամպանի ուժեղացուցիչ: Խնարկե՛ դետեկտոր-
ային կամ լամպավոր ընդունիչը պետք է, վոր
բաժարար չափով լսելի լինեն տելեֆոնով: Այդ
դեպքում ուժեղացուցիչը, վորի պատրաստելը և
բանեցնելը շատ պարզ է, զգալի չափով ուժե-
ղացնում է ընդունումը:

ՄՔԵՄԱՆ

Ուժեղացուցիչի սքեման տրված 1 և 3 նկար-
ներում: Ուժեղացուցիչը կազմված է մեկ տրանս-
ֆորմատորից, մեկ լամպից, շիկացման մարտ-
կոցից, անոդի մարտկոցից, ռեոստատից և լամ-
պի շիկացումը կանոնավորողից:

Սքեմայի գործողությունը հետևյալն է:

Հնդուներինց դուրս չեկող ցածր հաճախակա-
նության տատանումները՝ ուժեղացնելու նպա-
տակով՝ տրված են տրանսֆորմատորի առաջնա-
կան փաթույթին, վորը միջանի անգամ ավելի
պակաս պարուլքներ ունի, քան չերկրորդական
փաթույթը:



Նկ. 1. «Միկրո» լամպով գործող ուժեղացուցչի սքեման.

Ապա այդ տատանումները մտնում են ուժե-
ղացնող լամպի ցանցի մեջ և հոսանքի ուժի զը-
գալի տատանումներ են առաջացնում անողի շղ-
թալում, ուր դրված է տելեֆոն կամ ռեպրո-
դուկտոր: Ուժեղացուցիչը կարող է կցվել թե
դետեկտորային ընդունիչին և թե լամպավոր ըն-
դունիչին:

ԴԵՏԱԼՆԵՐԸ

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ. Ուժեղացուցչի ամենա-
պատասխանատու մասը տրանսֆորմատորն է.
ուստի ինքնաշեն տրանսֆորմատոր պատրաս-

տելիս պետք է պահպանել այն կանոնները, վոր
տրվում են նրա պատրաստման համար: Իսկ
պատրաստի տրանսֆորմատոր զննվիս պետք է
առավել ուժեղ լինի տալ պետարդյունաբերության
պատրաստած տրանսֆորմատորին:

Շուկայում վաճառվողներից՝ կարելի է խոր-
հուրդ տալ՝ գնել «Ելեկտրոսվյազ» արեստի տրանս-
ֆորմատորը:

Քիչ ցածր վորակի լին «Ուղի» և «Ուկրա-
ին-Ուղի» զավույների տրանսֆորմատորները:

Դետեկտորային ընդունիչին կցվող տրանսֆոր-
մատորի առաջնական փաթույթի պարուլքներն
ավելի քիչ պիտի լինեն, քան լամպավոր ընդու-
նիչին կցվող ուժեղացուցչինը, բայց վորովի-
տե մեր շուկայում չկան աշխարհի տրանսֆոր-
մատորներ, վորոնց միջին կետը դուրս բերված
լինի առաջնական փաթույթից, ստիպված ենք
դորձածել սովորական ցածր հաճախականու-
թյան տրանսֆորմատոր:

Յեթե ռադիոսիրտին ինքն է պատրաստում
ցածր հաճախականության տրանսֆորմատոր,
միջին կետը պետք է դուրս բերի առաջնական
փաթույթից, ինչպես՝ վերն ասացինք: Տրանսֆոր-
մատորի լեյքի ծալրերը (отвод), ամենից հար-
մար է, շինել փափուկ լարից:

Ինքնաշեն տրանսֆորմատոր շինելու ցուց-

մունքները տրված են «կապելյա» ռադիո-գրա-
դարանի № 4 - ում:

Շիկացման ռեզուլտատներ. - Մեկ «Միկրո» լամպի
համար դրվող շիկացման ռեզուլտատը պետք է
ունենա 25 ում դիմադրություն: Կարելի չէ
վերցնել «Ռադիո» զավոդի ռեզուլտատը, վորը
ներկայումս ամենալավն է համարվում, կամ Տու-
լայի ՈՒԷ ԸՆԿ. ռեզուլտատը, վոր եման է և լա-
վորակ:

Ուժեղացուցչի համար գործ են ածվում սո-
վորական սնող կլիմմաներ (սեղմակներ) և տելե-
ֆոնի ու ռեպրոդուկտորի սովորական բներ:

Ուժեղացուցչի լելքում գնում են ունիվեր-
սալ սեղմակներ, վորովհետև սրանք հնարավո-
րություն են տալիս ցանկացած ժամանակ ու-
ժեղացուցիչը միացնել ընդունիչին՝ խրանցալին
հորսելի (випка) ունեցող շնուրով, կամ թե մի
շնուրով, վորի ծալն անմիջապես դնում են ալդ
ունիվերսալ սեղմակի գլխիկի տակ: Իհարկե՝
այդ սեղմակների փոխարեն կարելի չէ վերցնել
սովորական սեղմակներ, լեթե վորև պատճառով
չի կարելի ճարել ունիվերսալ սեղմակներ:

ՄՈՆՏԱՎ


Ուժեղացուցչի մոնտաժը (հավաքելը) պարզ
է և անփորձ ռադիո սիրողի համար վոչ մի դժ-

վարություն չի ներկայացնում: Ամբողջ ուժե-
ղացուցիչը հավաքում են մեկ ուղղանկյուն ձևի
տախտակի (պանելի) վրա, վոր ծառայում է արկ-
դին վորպես ծածկոց: Նա շինվում է չոր ֆա-
ներից կամ ալլ փալտից, վոր հարմար է մեր
նպատակներին: Ալդ պանելի չափսերը և անց-
քերի նշումները տրված են նկ. 2-ում: Ուժե-
ղացուցիչը հաջողությամբ կարելի չէ հավաքել
նաև «անկյունավոր» ալսինքն՝ 3 կողմից բաց
պանելի վրա, և դրանից նրա աշխատանքը չի
փաստվի: Պանելը նշվում է ծակոտվում է 2-րդ
նկարի համաձայն, ուր ցույց են տրված հեռա-
վորություններն անցքերի միջև, իսկ անցքերի
տրամագծերը պետք է հավասար լինեն դետալ-
ների, որինակ, սեղմակների բների տրամագծե-
րին:

Դետալներն իրար են միացնում պղձի կամ
արծաթիլրած մեկ հաղորդիչով, վորի տրամա-
գիծն է 1—1, 5 մմ: Միացումը կատարում են
հետևյալ կերպ. միացվող հաղորդիչի (լարի) ծալ-
րին կլորշուրթով (круглогубцами) մերակ են
անում, ապա լարը ծռոտում են հարկավոր դիր-
քով, հետո՝ լարի մյուս ծալրին նույնպես մերակ
են անում:

Մերակներն ալսպիսի տրամագծի լեն արվում,
վոր կարելի լինի ազատ հագցնել հարկավոր դե-

տալի վրա: Պրանից հետո լարն ամրացնում են մանեկներով (զալկաներով), և 2 դետալները միացումը կարելի է համարել վերջացած: Մեր ուժեղացուցչում ալդպիսի միացումների թիվը 5 է (տես նկ. 4), վորովհետև մեր տրանսֆորմատորի մուտքի և լիլի թելերը (подводка) շինված են փափուկ լարերից: Յեթե դնում եք




Նկ. 2 Ուժեղացուցչի պանելի նմուշները:

«Մադիո զավուդի» տրանսֆորմատոր, նրա մուտքի ու լիլի հաղորդիչները պետք է անեք կոշտ լարից, վորովհետև նրա փաթույթների ծալերն ամրացրած են տրանսֆորմատորի վրա ամրացրած սեղմակներին: Այն տեղերում, ուր մոն-

տաժի լարերն իրարից մոտիկ են անցնում, պետք է լարերի վրա հաղցնել ուեալնե խողովակների կտորներ, կամ լուսավորութան համար զործածվող շնուրի հյուսվածքի մի կտոր, նախապես շել լակով տողորելով նրան:

Այն դեպքում, լերբ սիրողը կամենում է ունենալ մարտկոց (բատարեյա) նաև ցանցի համար (զրպանի լապտերի 1 մարտկոց), վորի մասին մենք հետո պիտի խոսենք, ալդ մարտկոցը պիտի դնել արկղի մեջ: Սա նրանով է հարմար, վոր մարտկոցը կախ ընկած չի մնա ուժեղացուցչի պատի վրա, կամ զրված չի լինի սեղանի վրա և սիրողի սեղանի վրա ավելորդ թելեր չեն լինի:


Մարտկոցը պետք է ամրացնել հետևյալ կերպ: Արուլից (лагуны) կտրում եք մի գլ (палоск-), նրա մեջտեղը պտուտակներով ամրացնում եք



Նկ. 2 «ՄԻՍ» լամպով զործող ուժեղացուցչի սքեման

արկղի պատին, իսկ ծալերը ծռում եք զեպի վեր, այն հաշվով, վոր ալդ գոյի մեջ տեղավորված մարտկոցը նրա մեջ ամուր կանգնի:

Առհասարակ, շատ սակավ և հաճախ լինում մարտկոցը փոխել: Նրանից դուրս չեկող թելերը շիւում են փափուկ լարից, + բևեռը միայնում են արանսֆորմատորի լեւկերորդական փաթուղթի



Նկ. 4. Ուժեղացուցչի մոնտաժի սքեման:

մի ծալրին, իսկ «—» բևեռը՝ լամպի ցանցին: Այդ ներարկումը (միացումը) 4-րդ նկարում ցույց է արված պուշկախրով:


ԿԱՐԳԻ ԲԵՐԵԼԸ ԿԱՄ ԱՇԽԱՏՆՅՆԵԼԸ

Ուժեղացուցիչը հավաքելուց հետո, հարկավոր է նրան լավ ստուգել՝ արդյոք լարերը փորեն

տեղ իրար չեն միանում, մոնտաժանդ, շիկացման շղթայի լարերը չեն միանում արդյոք անողի լարերի հետ, վորից լամպը կարող է փչանալ: Ինչպես ասացինք, անհուսալի տեղերում անպայմանորեն լարերին պետք է հազցնել մեկուսիչ խողովակներ: Ապա սկսում են ուժեղացուցիչը փորձել: Կարող է ախպես ել պատահել, վոր բոլոր մասերը ներարկել եք, սնունդը տվել եք, բայց ուժեղացուցիչն ինչ-վոր պատճառով չի աշխատում: Այդպիսի դեպքում, լեթե լամպը բոլորովին հուսալի չէ, ուժեղացուցչի պակասությունը պետք է փնտրեք արանսֆորմատորում: Յեթե վերջինիս փաթուղթներից փորեն մեկը փորեն տեղում կտրված է, հարկավոր է արանսֆորմատորը փոխել նորով, կամ, վնասված փաթուղթը նորից փաթաթել:

Ցանցի մարտկոցը հաճախ նրա համար են դնում, վոր ավելի պարզ ուժեղացում ստանան: Բայց, սովորաբար, կարելի չէ և առանց այդ մարտկոցի: Սնունդը տալիս եք ուժեղացուցչին ելեկտրական շնուրի միջոցով: Ավելի լավ է, լեթե շնուրը հյուսված է միջանի գույն-գզուլն թելերից, այս ախ նպատակով է արվում, վոր դեպի անողի և շիկացման մարտկոցները գնացող լարերն իրար հետ չշփոթենք և գրանով հանկարծ լամպը չալքենք: Հյուսված պատ-

բաժանի շնորհի ծալքերին ծալքոցներ են հաղցնում, վորոնց վրա նշանակում են մարտկոցի բեռները: Այլ ծալքոցները սեղմում եք ուժե-



Նկ. 5 Ուժեղացուցչի արտաքին տեսքը

ղացուցչի մեծան սեղմակների տակ և մարտկոցների սեղմակների տակ: Վորոշ մեծության բլիկ-կոնդենսատոր դնել պետք չէ, վորովհետեւ նրա պարունակումը (տարողութունը) պետք է փոխվի, նախած ունի արդուկտորի տիպին ու նրա հատկություններին:

Բլիկ-կոնդենսատորի պարունակումը վերցնում են 2000-ից մինչ 5000 սմ: Դրանից ավելի պարունակում դնել պետք չէ, վորովհետեւ դրանից ձախը խլանում է:

Նկ. 5-ում արված է պատրաստի ուժեղացուցչի տեսքը:

ՈՒԺԵՂԱՑՈՒՑՅՈՒ ՆԵՐԱՐԿՈՒՄԸ

Ընդունիչն ուղարկող կայանին լավ հարմարեցնելուց (լարելուց) և դետեկտորը կանոնավորելուց հետո, ընդունիչի բներից հանում են տելեֆոնն ու այդ բների մեջ ներարկում ուժեղացուցիչը: Նրա գործի գցելը նրանումն է կայանում, վոր շիկացման ռեոստատով վառում են լամպի թելը: Շիկացման ռեոստատը վորոշ չափով կանոնավորում է նաև ուժեղացումը: Ռեոստատի ընդիմադրութունը պետք է փոքրացնել, դրանից ընդունվող ձայնի բարձրութունն աճում է: Ռեոստատի դիմադրութունը շարունակում ենք փոքրացնել մինչ այն ժամանակ, լերը նկատում եք, վոր ձայնի բարձրութունն այլ ևս չի աճում:

Ուժեղացուցիչը լամպավոր ընդունիչին ներարկելու համար նույն ոպերացիաները պիտի կատարել, ինչ դետեկտորային ընդունիչին ներարկելու մասին տավեց:

ՄՆՈՒՄԸ

Ցեթե անողի լարումը հասնում է 60—80 վորտի, ուժեղացուցիչը բոլորովին նորմալ կաշխատի, իսկ լեթե ձեռքի տակ ունենք ավելի բարձր լարումի հոսանքալքուր, այդ ավելորդը չի վը-

նաեի, իսկ յերբեմն, կարող ե պատահել, վոր
գրանից ձայնն ափելի բարձր լսվի: Անողը մե-
լու համար կարելի լե գործածել ուղղիչ, ա-
կումուլատոր կամ չոր մարտկոց, վորը կարող ե
յերկար ժամանակ ծառայել, վորովհետև միայն
մի լամպ պետք ե մնի:

Շիկացման համար վորպես հոսանքաղբյուր կա-
րելի լե գործածել ալումուլատոր կամ չոր մարտ-
կոց, վորոնք, լեթե միայն լավորակ են, նույն
պես, ինչպես և անողի մարտկոցը, մի լամպ մե-
լու համար կարող են յերկար ժամանակ ծառայել:

Վերջացնելով մեր ասելիքն ուժեղացուցչի
մասին՝ մի յերկու խոսք ասենք յերկցանցանի
լամպի մասին:

Ցածր հաճախականության ուժեղացուցչի մեջ
յերկցանցանի լամպը վատ չի աշխատում, բայց
«Միկրո» լամպից քիչ վատ ե աշխատում: Յերկ-
ցանցանի լամպի սքեման տրված ե նկ. 3-ում:
Այս լամպի անողի համար պահանջվում ե 8-ից
մինչ 25 վոլտ լարում:

«ՄԻՍ» լամպի լրացուցիչ ցանցը, վոր դուրս
ե հանվում լամպի ցոկոլի վրա, մի առանձին
փափուկ լարով միացնում են անողի մարտկոցի
(+) բևեռին: Իսկ ուժեղացուցչի սքեման միում
ե անփոփոխ, ինչպես «Միկրո» լամպի, նույն-
պես և «ՄԻՍ» լամպի համար:

Արագրեց՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Դիմվել № 7928 (բ.), Պատվեր № 3000, Հրատ. № 2374, Տիպո 2000

Պետհրատի տպարան

Յերեվան

Հանձնված ե արտադրության 17 IX 1932 թ.

Ստորագրված ե տպելու 11 XII 1932 թ.

Ստ. Փ. Ե.

<< Ազգային գրադարան



NL0270619

11892